

**ԳԵՎՈՐԳ Բ ԳԱՌՆԵՅԻ՝ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՆՇՈՂ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ**

*Բանայի բառեր – Հայոց եկեղեցի, Մաշտոց վարդապետ, Աշոտ Ա Բագրատունի, Մմբատ Ա Բագրատունի, թագադրություն, հայոց թագավորություն, հաշտարար առաքելություն, գերեվարություն, ուժերի համախմբում, Արաբական խալիֆաթ*

IX դարի վերջը հայոց պատմության մեջ նշանավորվեց չորսուկես դար առաջ կործանված թագավորության վերականգնումով, որը հայ ժողովրդի բոլոր խավերի միասնական պայքարի արդյունքն էր: Այն իրականացավ Բագրատունիների գլխավորությամբ և Հայոց եկեղեցու գործունե աջակցությամբ. վերջինս ձգտում էր ազատվել այլազգիների կրոնական անհանդուրժողականությունից և հալածանքներից: Թագավորության հռչակման բարեգուշակ նախադրյալները ձևավորվել էին դեռևս Ջաքարիա Ջազեցու օրոք (855-876), որոնք առարկայացան Գևորգ Բ Գառնեցու կաթողիկոսության տարիներին:

Գևորգ Բ-ն ծնունդով «էր ի գիւղաքաղաքէն Գառնույ»<sup>1</sup>: Սկզբնաղբյուրներում նրա ծննդյան տարեթվի մասին որևէ հիշատակություն չկա: Պատմիչների տողերի արանքում նրա տարիքի մասին տեղ գտած մեկ, երկու հարևանցի արտահայտություններ թույլ են տալիս կռահումներ կատարել: Թովմա Արծրունու երկում կա կաթողիկոսի տարիքի մասին անուղղակիորեն վկայող մի այսպիսի դրվագ. անդրադառնալով 877-880-ական թվականներին Արծրունի նախարարների միջև ծագած հակասությունները հարթելու առիթով Գևորգ Գառնեցու միջամտությանը՝ պատմիչը Հայոց հայրապետին բնորոշում է «գարժանի ալեացն պատուականութիւն»<sup>2</sup> արտահայտությամբ: Մրանից ենթադրելի է, որ ալտոր կաթողիկոսն այդ ժամանակ եղել է 70 տարեկանի սահմանում: Նրա տարիքի մասին հիշատակություն ունի նաև Հովհաննես Դրասխանակերտցին: Վերջինս հղում է ապագա կաթողիկոս Մաշտոց Եղիվարդեցու (897-898) նամակը՝ ուղղված Աբաս սպարապետին, որտեղ նա, Գևորգ Գառնեցու առաքինի վարքը շեշտելով, հավելում է. «Ի ծերու-

<sup>1</sup> **Յովհաննես Դրասխանակերտցի**, Պատմութիւն հայոց // Մատենագիրք հայոց, հ. ԺԱ, Ժ դար, Պատմագրութիւն, գիրք Ա, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 442:

<sup>2</sup> **Թովմա Արծրունի եւ Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց // Մատենագիրք հայոց, հ. ԺԱ, Ժ դար, գլ. Բ, էջ 234:

թեան դար հասեալ»<sup>1</sup>: Սա նշանակում է, որ նամակի ստեղծման ժամանակ՝ 890-891 թվականներին, կաթողիկոսը եղել է 80-90 տարեկան ծերունի: Հենվելով պատմիչների վերոհիշյալ բնութագրական արտահայտությունների վրա՝ կարելի է ենթադրել, որ Գևորգ Գառնեցին ծնվել է 800-810 թվականներին:

Պատմաբան կաթողիկոսի բնորոշմամբ՝ նա մի պատվական այր էր «յընտանեաց տան կաթողիկոսարանին»<sup>2</sup>: Սա նշանակում է, որ Գևորգը շարքային հոգևորական չէր, այլ կաթողիկոսարանի պաշտոնեության մեջ աչքի ընկած եպիսկոպոս<sup>3</sup>: Բարձրաստիճան հոգևորականներն ու իշխանները կաթողիկոսի թեկնածու են ընտրում Գևորգ Գառնեցուն, որից հետո Աշոտ Ա Բագրատունին «հրամայե ձեռնադրել զնա յառաջնորդութիւն տանս Թորգոմայ»<sup>4</sup>: Երկրի առաջնորդը կաթողիկոսի պաշտոնում նախապատվությունը տալիս է այնպիսի հոգևորականի, որը կշարունակեր և հաջողությամբ ավարտին կհասցներ հայոց թագավորության վերականգնման գործընթացը: Գևորգ Գառնեցու հայրապետական պաշտոնավարությունը փաստացի մեկնարկել է Ջաքարիա Չազեցու վախճանից անմիջապես հետո՝ 876 թ. վերջերին, և տևել 21 տարի<sup>5</sup>: Տեր Գևորգի կաթողիկոսական օժուրը և պաշտոնական ձեռնադրությունը «մեծաշուք պատուով» տեղի են ունեցել հաջորդ տարվա սկզբին՝ «յաւուրս տանի թլփատութեան Տեառն»<sup>6</sup>: Ս. Օրմանյան սրբազանի տոմարագիտական հաշվարկներով այդ տոնն «Աստուածայայտութեան ութօրէքն» է և համապատասխանում է 877 թ. հունվարի 13-ին<sup>7</sup>: Հիշյալ տոնական արարողությունները տեղի են ունեցել Սմբատ Խոստովանողի կառուցած Երազգավորսի «մեծապայծառ զարդու» եկեղեցում:

---

<sup>1</sup> **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 450:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 442:

<sup>3</sup> Հայր Օրմանյանի կարծիքով՝ Գևորգ Գառնեցին հավանաբար Հովհաննէս Դրասխանակերտցու երկում «եպիսկոպոս դրան կաթողիկոսին» եզրույթով հիշատակված պաշտոնյան է (տե՛ս **Օրմանյան Ս.**, Ազգապատում, հ. Ա, Էջմիածին, 2001, § 674, սյունակ 1144):

<sup>4</sup> **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 442:

<sup>5</sup> Տե՛ս **Յովհաննէս Դրասխանակերտցի**, Շարից հայրապետացն հայոց յայտարարութիւնք // Մատենագիրք հայոց, հ. ԺԱ, Ժ դար, էջ 608: Ըստ Հայր Ալիշանի հաշվարկների՝ Գևորգ Գառնեցու աթոռակալության սկիզբը 876 թվականի հունվարն է (տե՛ս **Ալիշան Ղ.**, Յուշիկք հայրենեաց հայոց, հ. Ա, Վենետիկ, 1869, էջ 475: Հմմտ. **Իզմիրլեան Ս.**, Հայրապետութիւն Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցոյ և Սիս ու Աղթամար, Բ հրատ., Ս. Էջմիածին, 2008, էջ 65): Սամվել Անեցին և Ասողիկը նրան վերագրում են 22-ամյա հայրապետություն (տե՛ս **Մամուլ Անեցի** եւ շարունակողներ, Ժամանակագրութիւն, աշխատասիր. Կ. Մաթևոսյանի, Երևան, 2014, էջ 167, **Ստեփանոս Տարանեցի Ասողիկ**, Պատմութիւն Տիեզերական // Մատենագիրք հայոց, հ. ԺԵ, Ժ դար, Պատմագրութիւն, գիրք Բ, Անթիլիաս-Լիբանան, 2010, հանդես Բ, գլ. Բ, էջ 710):

<sup>6</sup> **Ստեփանոս Տարանեցի Ասողիկ**, նշվ. աշխ., էջ 710:

<sup>7</sup> Տե՛ս **Օրմանյան Ս.**, նշվ. աշխ., § 674, սյունակ 1145: Հմմտ. **Չամչյան Ս.**, Հայոց պատմություն, հ. Բ, Երևան, 1984, էջ 702:

Գևորգ հայրապետի ուսումնառության և գրական գործերի մասին ստույգ տեղեկություններ չկան, սակայն քիչ հավանական է, որ կաթողիկոսարանի «պատուական» պաշտոնյան կրթված և աստվածաբանության մեջ խորագիտակ հոգևորական չլիներ: Ճիշտ է, նրա գրչին պատկանող գործեր մեզ չեն հասել, սակայն նրա օրոք շարունակվել է հայ-բյուզանդական դավանաբանական նամակագրությունը, որում չէր կարող անմասն լինել օրվա կաթողիկոսը<sup>1</sup>:

Զարգացած ավատատիրության դարաշրջանին բնորոշ քաղաքական մասնատվածության պայմաններում հայ ժողովրդին միավորող միակ ինստիտուցիոնալ կառույցը եկեղեցին էր: Հայոց նոր հայրապետի օրոք եկեղեցին շարունակում էր օրինակարգել երկրի իրավական հարաբերությունները՝ ամրապնդելով իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու իշխանության հոգևոր և իրավական հիմքերը: Իր հոգևոր-քաղաքական իրավասության սահմաններում Գևորգ հայրապետն աջակցում էր նախարարների միջև գծությունների վերացման և Հայաստանի ներքին կայունության հաստատման՝ Աշոտ Բագրատունու ձեռնարկներին: Աշոտ Բագրատունու և նախարարների ոչ դյուրին հարաբերություններում կաթողիկոսը հանդես էր գալիս հաշտարարի և հոգևոր երաշխավորի դերում, փորձում չեզոքացնել արաբների կողմից խրախուսվող հայ իշխանների անջատողական հավակնությունները: Հարկ է նշել, որ այդ ուղղությամբ հայրապետի ջանքերը ոչ միշտ էին պսակվում հաջողությամբ:

«Բաժանիր, որ տիրես» բանաձևով առաջնորդվող Արմինիայի արաբ կառավարիչները հաճախ էին խաթարում հայ նախարարների միաբանությունը, քանի որ «բանսարկուք ոմանք հրապոյրս պղտորս քսութեան անէին տանէին ի միոջէն առ միւսն»<sup>2</sup>: Նման քսության հետևանք էր Տարոնի իշխան Աշոտ կուրապաղատի ձերբակալությունը: Ըստ Արծրունյաց պատմիչի Գրիգոր-Դերենիկին Աշոտ կուրապաղատի դեմ էր հրահրել կայսիկ իշխան Ապլբառը<sup>3</sup>: Վերջինս հավատացրել էր Վասպուրականի իշխանին, թե Տարոնի կուրապաղատը, մերձենալով նոր նշանակված ոստիկանի հետ, ջանում է իրեն գրկել իշխանությունից<sup>4</sup>: «Կուլ տալով թունավոր խայծը»՝ Վասպուրականի իշխան Գրիգոր-Դերենիկը ձերբակալում է Աշոտին, արգելափակում Վասպուրականի Սևան

---

<sup>1</sup> Պատասխանի թղթոյն Փոտայ. գրեալ Սահակայ հայոց վարդապետի հրամանաւ Աշոտայ հայոց իշխանաց իշխանի // «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 283-294:

<sup>2</sup> Թովմա Արծրունի եւ Անանուն, նշվ. աշխ., էջ 230:

<sup>3</sup> Սա Գրիգոր Նարեկացու հիշատակած Աբլ-Վարդ ամիրան է, որը կայսիկ ցեղից էր և իշխել է Ապահունիքում Աբուլ-Բարդ անունով: Նա այն ուզուրպատորներից էր, որը, օգտվելով խալիֆայության թուլացումից, իշխանություն էր հափշտակում այս կամ այն երկրամասում (տե՛ս **Հովհաննիսյան Աշ.**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Ա, Երևան, 1957, էջ 341):

<sup>4</sup> Տե՛ս **Թովմա Արծրունի եւ Անանուն**, նշվ. աշխ., էջ 230:

ամբոցում «եւ հրամայեաց Հասանկան քեռորդոյ իւրոյ՝ պահել զնա»<sup>1</sup>:

Տարոնի իշխանապետի ձերբակալումն ու իշխանազրկումը չէին կարող չարժանանալ իշխանաց իշխանի և երկրի հոգևոր առաջնորդի ուշադրությանը: Գևորգ կաթողիկոսը միջնորդում է Աշոտ կուրապաղատի ազատության համար, «քանզի յոյժ պատկառ կայր ի պաշտանատարութիւն հայրապետին իշխանն Տարունոյ, եւ նա սաստիկս հոգայր վասն նորա»<sup>2</sup>: Հայոց հայրապետը «բազում անգամ թղթովք աղաչեալ» Դերենիկին հետ կանգնել անիրավ գործից և ազատել Աշոտին: Այդ եղանակով նա հաջողության չի հասնում և «ել զնաց մեծաւ հոգաբարձութեամբ՝ լուծանել զնա ի տառապանաց արգելանին»<sup>3</sup>: Բայց անդրդվելի Գրիգոր-Դերենիկը հաշվի չառավ կաթողիկոսի խնդրանքը: Դժվար չէ կռահել, որ ներիշխանական հարաբերություններին միջամտելու Գևորգ Գառնեցու գործողությունները եղել են Աշոտ Բագրատունու հրահանգով կամ առնվազն նրա հետ համաձայնեցված: Այդուհանդերձ, վերջինիս ուղղակիորեն չմիջամտելու իրական շարժառիթները միանշանակ պարզ չեն: Միայն կարող ենք արձանագրել, որ իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու և իր փեսա Գրիգոր-Դերենիկի միջև կարանթաքայց պայքար քաղաքական գերիշխանության համար<sup>4</sup>: Նրանց միջև մրցակցության խորացման պատճառն այն էր, որ արաբ իշխանավորները զնահատում էին Գրիգոր-Դերենիկի ուժը և հաշվի նստում նրա հետ:

Աշոտ կուրապաղատին հաջողվում է խորամանկությամբ ազատվել Սևան ամրոցից: Նա Հասանին հավատացնում է, թե Գրիգոր-Դերենիկը մտադիր է Հասանի հետ վարվել նույն կերպ, ինչպես իր հետ, այն է՝ խլել ամրոցն ու տիրույթները և արգելափակել: Հասանն այդ տեղեկությունը ընդունում է իբրև իրողություն և «կորապաղատին ընդրաձակեաց ելանել, զի երթիցէ ուր եւ կարասցէ հասանել ըստ աջողելոյ իրին»<sup>5</sup>: Դրանից հետո Հասանը ձերբակալում է քեռուն՝ Գրիգոր-Դերենիկին: Իշխանաց իշխան Աշոտը և Գևորգ կաթողիկոսը, հետաձգելով մյուս գործերը, այս անգամ ևս ձեռնամուխ են լինում Գրիգոր-Դերենիկի ազատ արձակմանը: Նրանք Գուրգեն Արծրունու, Մուշեղ Բագրատունու և այլ իշխանների ուղեկցությամբ շտապում են Վասպուրական և հանդիպում Հասանին: Իմաստուն հայրապետն իր ալևոր մագերին պատշաճող ազնվությամբ համոզում է երիտասարդ Հասանին ազատ արձակել Դերենիկին՝ խոստանալով նրան «զիշխանական ճոխու-

---

<sup>1</sup> **Թովմա Արծրունի եւ Անանուն**, նշվ. աշխ., էջ 231: Պատմիչն առաջ է քաշում այս միջադեպի ծագման ևս մեկ վարկած. Աշոտի ձերբակալման իրական շարժառիթը Տարոնի իշխանության հանձնումն էր իր քույր Մարիամի ամուսնուն՝ Աշոտի եղբայր Դավիթին (տե՛ս նույն տեղում, տե՛ս նաև **Գրիգորյան Գ.**, Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դարերում, Երևան, 1983, էջ 103):

<sup>2</sup> **Թովմա Արծրունի եւ Անանուն**, նշվ. աշխ., էջ 233:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Տե՛ս **Յովհաննէս Դրասխանակերտցի**, Պատմութիւն հայոց, էջ 441-442:

<sup>5</sup> **Թովմա Արծրունի եւ Անանուն**, նշվ. աշխ., էջ 234:

թեան զբարձրագահութիւն եւ որ ինչ այդմ հետեւեր»<sup>1</sup>: Իշխանաց իշխանի և հայրապետի խնդրանքով «հանին զնա (Գրիգոր-Դերենիկին – Վ. Ա.) յարգելանէ բանտին», սակայն Հասանը, որպէս քեռու չար մտադրությունների կանխարգելման լծակ, պատանդ է պահում նրա որդուն՝ Գագիկին: Հայոց կաթողիկոսի և իշխանաց իշխանի գլխավորությամբ հայ ազդեցիկ իշխանների միջև ծագած հակասությունների լուծումը և երկրում հարաբերական կայունության հաստատումը նպաստավոր վիճակ էին ստեղծում թագավորության վերականգնման գործընթացը տրամաբանական ավարտին հասցնելու համար: Այն պէտք է նշանավորվեր իշխանաց իշխանին «ոխերիմ բարեկամների» ուղարկած թագավորական նշանակներով պսակելու փաստով:

Հայոց թագավորության վերականգնման գործընթացի աշխուժացումը ուղիղ համեմատական էր Արաբական խալիֆայության տրոհմանը և թուլացմանը: IX դարի կեսերից Հայոց եկեղեցին, ի դեմս կաթողիկոս Ջաքարիա Չագեցու, արդյունավետ դիվանագիտական աշխատանք էր տանում արաբների հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու ուղղությամբ: Ջաքարիա Չագեցին այցելում է Միջագետքի արաբ կառավարիչ, Ատրպատականի ամիրա Իսա Իբն ալ-Շայխ ալ-Շայբանիին<sup>2</sup> և խնդրում միջնորդել արաբ խալիֆ Ահմեդ Աբուլ Աբասին «թագաւորացուցանել զնա (Աշոտին – Վ. Ա.) ի վերայ ինքեանց»<sup>3</sup>: Ոստիկանը հայոց հոգևոր առաջնորդին ընդգծված բարյացակամությամբ խոստանում է միջնորդել արաբ խալիֆին Աշոտ Բագրատունուն թագավորի տիտղոս շնորհելու հարցում<sup>4</sup>: Փաստորեն ստացվում է, որ նախ Բագրատունիներին մրցակից Արծրունիներն ու Սյունիներն են Աշոտ Բագրատունուն ճանաչել հայոց թագավոր և միայն դրանից հետո կաթողիկոսի միջոցով դիմել խալիֆին արքայական խորհրդանշաններ ստանալու խնդրանքով<sup>5</sup>: Խալիֆը «առաքէ ապա Աշոտոյ թագ թագաւորական, գոր եւ

<sup>1</sup> **Թովմա Արծրունի եւ Անանուն**, նշվ. աշխ., էջ 234:

<sup>2</sup> IX դարի արաբ պատմագիր Յակուբին հաղորդում է, որ Իսա Իբն ալ-Շայխ ալ-Շայբանին 870-871 թթ. նշանակվել է Արմինիայի, Դիար Բաքրի և Ատրպատականի կառավարիչ (տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 16, Արաբական աղբյուրներ, Գ, Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր, Երևան, 2005, էջ 398, **Տեր-Ղևոնդյան Ա.**, Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը // «ՊԲՀ», 1977, թիվ 1, էջ 128, **Նալբանդյան Հ.**, Արաբացի ոստիկանները Հայաստանում // ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1956, թիվ 8, էջ 123):

<sup>3</sup> **Յովհաննէս Դրախանակերտցի**, նշվ. աշխ., էջ 443:

<sup>4</sup> Տե՛ս **Ալեքսանյան Վ.**, Ջաքարիա Չագեցու աթոռակալությունը և հայոց թագավորության վերականգնման նախադրյալների ստեղծումը IX դարի կեսերին // «ԲԵՀ. Հայագիտություն», 2020, թիվ 2 էջ 43:

<sup>5</sup> **Markwart J.**, Sudarenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen // «Հանդէս ամսօրեայ», 1915, թիվ 1-12, էջ 131-132: Սյունյաց պատմիչի վկայությամբ՝ խալիֆին միջնորդել և Աշոտին թագավոր են դարձրել Սյունյաց և Արծրունյաց իշխանները հայոց մյուս իշխանների հետ (տե՛ս **Ստեփաննոսի Միւնեաց** եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1861, գլ. LԶ, էջ 127-128): Այս տեղեկությունը կարևոր է, որ

բերեալ իսկ ոստիկանին Յիսէի, ընդ նմին եւ այլ եւս զգեստս թագաւորականս, եւ պարզեւս եւ պատիւս, եւ երիվարս աւղապարիկս զինուք եւ զարդուք»<sup>1</sup>:

Գևորգ Գառնեցու աթոռակալության ժամանակաշրջանի թերևս ամենանշանակալի երկու իրադարձություններից առաջինը իշխանաց իշխան Աշոտ Բագրատունու թագադրման ծիսահանդեսի գլխավորումն էր և թագօրհնեքի արարողության կատարումը: Աշոտի թագադրման արարողության մասին տեղեկությունները սակավ են, հայտնի է միայն, որ այն եղել է բազմամարդ հանդես՝ աշխարհիկ գործիչների և հոգևոր դասի ներկայացուցիչների մասնակցությամբ: Մասնավորապես ներկա են եղել «տէր Յովհաննէս Սիւնեաց եպիսկոպոս այլովք եպիսկոպոսօք»<sup>2</sup>: Այդ իրադարձությունների մասնակից Հովհաննէս Դրասխանակերտցին պատմում է, թէ ինչպէս են հրավիրում Գևորգ կաթողիկոսին, որը «զհոգեւոր արհնութեանցն գովութիւնս աստուածայինս ի վերայ կատարեալ փոխանակ ամման սրուակի իւղոյն, պսակեն զնա թագաւոր ի վերայ Ասքանագեան ազին»<sup>3</sup>: Պատմիչի այս վկայության մեջ ուշագրավ է սրվակի ծիսական յուղով թագավորին չօծելու փաստի մատնանշումը: Ինչպէս հայտնի է, Բյուզանդիայի կայսրերի թագադրման ժամանակ Կոստանդնուպոլսի պատրիարքներն օծման արարողություն էին կատարում: Սրանով պատմիչը հավանաբար շեշտում է հունաց նմանատիպ ծեսին չհետևելու հանգամանքը, քանի որ բյուզանդական կողմն Աշոտին թագավոր չէր ընդունում: Նա բյուզանդական կայսրերի համար եղել է ոչ ավել, քան «իշխանաց իշխան», «որդի սիրելի», «հոգեկան զավակ»<sup>4</sup>:

Աշոտի թագադրության արարողությունը Վարդան Արևելցին բնորոշում է որպէս Գևորգ կաթողիկոսի ձեռամբ թագօրհնություն. «Օրհնէ զթագն տէր Գէորգ»<sup>5</sup>:

Սյունյաց պատմիչն Աշոտ Բագրատունու թագավոր հռչակվելն արժևորում է որպէս համահայկական նշանակության իրադարձություն և հաղորդում, որ Աշոտին թագավոր «էօծ տէր Գէորգ Հայոց կաթողիկոս»<sup>6</sup>: Անդրա-

---

վկայում է Բագրատունիներին մրցակից նախարարական տների՝ Արծրունիների և Սյունիների համերաշխությունն Աշոտի հետ:

<sup>1</sup> **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 443: Աշոտին թագ բերողը չէր կարող Յիսէ ոստիկանը լինել, քանի որ նա արդեն մահացած էր (882 հուլիսի 25-883 հուլիսի 10): Պատմիչի՝ Յիսէի թագ բերելու հիշատակությունը կարելի է հասկանալ զուտ թագ բերելու փաստի արձանագրմամբ, այլ ոչ թէ թագադրությամբ (տե՛ս Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., հ. II, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 158, **Շղիագարյան Ա.**, Աշոտ Ա Բագրատունի թագավոր հայոց, Երևան, 2014, էջ 64):

<sup>2</sup> **Ստեփաննոսի Սիւնեաց** եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, գլ. I, Զ, էջ 128:

<sup>3</sup> **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 443:

<sup>4</sup> Տե՛ս **Բարթիկյան Հ.**, Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ. // «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ «ԼՀԳ»), 1996, թիվ 2, էջ 17, 27:

<sup>5</sup> Հաւաքումն պատմութեան **Վարդանայ վարդապետի**, Վենետիկ, 1862, էջ 85-86:

<sup>6</sup> **Ստեփաննոսի Սիւնեաց** եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, գլ. I, Զ, էջ 128:

դառնալով Ստեփանոս Օրբելյանի ձևակերպմանը՝ Մ. Օրմանյանը չի ընդունում քննվող դեպքերից ավելի քան չորս դար հետո ստեղծագործած Սյունյաց պատմիչի տեղեկությունը օժման վերաբերյալ և նկատում է, որ Ստեփանոս Օրբելյանը «իր օրուան սովորութեան համեմատ կը խոսի»<sup>1</sup>:

Թագադրման արարողության ժամանակագրության ճշգրտման համար արժեքավոր սկզբնաղբյուր է XIV դարում ընդօրինակված ձեռագիր մի Ավետարան: Հիշատակարանում գրիչ Գրիգոր Մաշկևորն Աշոտի թագադրման ծեսի մասին գրում է. «Գրեցաւ ի սկիզբն թագաւորութեան Բագրատունեաց Աշոտոյ, ձեռամբ անարժան Գրիգոր Մաշկեորի ի ժամանակս հայրապետութեան Գեորգա կաթողիկոսին որ օժեաց զԱշոտ թագաւոր հայոց ի թվ. մերում ԳՃԼԳ (884) և քաղոց ամսոյ Ժ ի անուն սրբոյն Սքանչելագործին վանիցն»<sup>2</sup>: Բացառությամբ Հովհաննես Դրասխանակերտցու՝ դեպքերին ժամանակամերձ մյուս մատենագիրներն իրենց երկերում նշել են Աշոտի թագադրման տարեթիվը, որը տատանվում է 884-888 թթ. միջակայքում<sup>3</sup>: Ժամանակային տարաձայնությունները Ն. Ադունցը բացատրում է նրանով, որ մի դեպքում Աշոտի թագավորությունը ներկայացրել են թագադրման հանդեսից, մյուս դեպքում՝ թագը ստանալու օրից: Նրա կարծիքով՝ ամիրապետից թագ ստանալը և թագադրության հանդեսը միաժամանակ չեն կատարվել<sup>4</sup>:

Վերլուծելով Աշոտ Ա Բագրատունու թագադրության հանգամանքները՝ Ա. Եղիազարյանը ենթադրում է, որ խալիֆի ուղարկած թագը ստանալուց որոշ ժամանակ անց՝ 884 թ. օգոստոսի 26-ին, Աշոտը կազմակերպում է թագադրության ոչ մեծ հանդես: Նշանակալի իրադարձությանը հնչեղություն չտալու պատճառը, ըստ նրա, Բյուզանդիայի կայսր Վասիլ Ա-ի հակազդեցությունը չհարուցելն էր<sup>5</sup>: Կայսեր համաձայնությունը կամ, Աստղիկի ձևակերպմամբ, «կամակցութիւնը» ստանալուց հետո 887 թ. կազմակերպվում է թագադրության մեկ այլ հանդիսություն, որով ազդարարվում է հայոց թագավորության համընդհանուր ճանաչումը<sup>6</sup>:

---

<sup>1</sup> Օրմանյան Մ., նշվ. աշխ., § 680, պունակ 1156: Մանրամասների բացակայությունը հայր Ալիշանին ևս թողնում են ենթադրությունների հույսին, թե «ի՞նչ կարգաւ, ի՞նչ ծիսիւ, ինչ աղօթքով կամ օրհնութեամբ եղաւ այս պսակս, արդեօք... հին հայոց ձևով, թէ Յունաց կայսերաց ծիսին հետևեցան» (տե՛ս Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 490): Հայ եկեղեցական իրավունքի ուսումնասիրող Ն. արք. Մելիք-Թանգյանը գտնում է, որ հայոց թագավորների և կաթողիկոսների օժման ծեսը սկիզբ է առել Բագրատունի Աշոտ Ա-ի թագադրման արարողությունից (տե՛ս Մելիք-Թանգեան Ն., Հայոց եկեղեցական իրավունքը, հ. Բ, Շուշի, 1905, էջ 119):

<sup>2</sup> «Արարատ», 1910, թիվ 7, էջ 623:

<sup>3</sup> Տե՛ս Թովմա Արծրունի եւ Անանուն, նշվ. աշխ., 238, Ստեփանոս Տարանեցի Աստղիկ, նշվ. աշխ., էջ 740, Մամուէլ Անեցի եւ շարունակողներ, էջ 168, Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, էջ 86, Ստեփաննոսի Միւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, գլ. ԼԶ, էջ 128:

<sup>4</sup> Տե՛ս Ադունց Ն., Բագրատունյաց փառքը // Ադունց Ն., Երկեր, հ. Ա, Երևան, 2006, էջ 477:

<sup>5</sup> Տե՛ս Եղիազարյան Ա., նշվ. աշխ., էջ 60-61: Տե՛ս և Հակոբյան Վ., նշվ. աշխ., հ. 2, էջ 157:

<sup>6</sup> Տե՛ս Եղիազարյան Ա., նշվ. աշխ., էջ 61:

Թեև կաթողիկոսարանը գտնվում էր ոստիկանության կենտրոն Դվինում, սակայն ենթադրվում է, որ թագադրումը տեղի է ունեցել ժամանակի քաղաքական կենտրոն Երազգավորսում, «որովհետև այնտեղ էր Հայաստանի ինքնուրոյն կառավարութեան կեդրոնը»<sup>1</sup>: Բանն այն է, որ արաբական իշխանությունը չէր հանդուրժի ոստիկանության կենտրոնում թագադրության հանդես կազմակերպելը, քանզի դա նրանց կողմից կրնկավվեր իբրև մարտահրավեր, որով շեշտվում էին Հայաստանի անջատվելը խալիֆայությունից և հայոց անկախ թագավորության վերականգնումը:

Հայոց կաթողիկոսի ձեռամբ թագի օրհնությունն իրականացնելով՝ սրբազնագործվում և օրհնականացվում էր Բագրատունի նորընծա գահակալի իշխանությունը: Միաժամանակ դրանով Աշոտ Բագրատունին չեզոքացնում էր ոչ քրիստոնյա վեհապետից թագ ստանալու բացասական ազդեցությունը հայ հասարակության մեջ: Հայոց կաթողիկոսի կողմից Աշոտի թագադրությունը վկայությունն է այն փաստի, որ թագավորության վերականգնումը ոչ թե օտար տիրակալների շնորհն էր, այլ ձեռք էր բերվել Հայաստանի գործուն ուժերի ջանքերով և հայոց կաթողիկոսի օրհնությամբ<sup>2</sup>:

Աշոտի թագավորության տարիները նշանավորվեցին երկրի տնտեսական և քաղաքական վերելքով, երբ նա «բազում եւ երեւելի կարգս յարդարէր աշխարհի տերութեան իւրոյ յարինուածս տանց, ազգաց, քաղաքաց, շինից, դաստակերտաց, եւ հարթ հաւասար ըստ իւրաքանչիւրոցն կատարէր կարգս՝ լեռնականաց և ջերմահովիտ բարեխառն դաշտականաց, եւ զամենայն տափարակ տեղիս ազարակս և գոմս դներ, եւ զմարմանդս յայգիս եւ ի բուրաստանս զարդարէր»<sup>3</sup>: Այդ ընթացքում Հայոց կաթողիկոսը եղել է Աշոտ Բագրատունու կողքին, որպէս նրա անդավաճան աջակից և խորհրդական:

Եկեղեցիների և վանքերի բարեկեցությունն ապահովելու Աշոտի առանձնահատուկ վերաբերմունքը շարունակվում է մինչև կյանքի վերջը: Դրա վկայությունը կյանքի վերջին օրերին Հայաստանի եկեղեցիներին մատուցած նրա առատաձեռն նվերներն են: Կանխազգալով մոտալուտ վախճանը՝ Աշոտն իր մոտ է հրավիրում է Գևորգ կաթողիկոսին և նրանից որպէս հաղորդություն ընդունում «զփրկութենագործ զմարմին եւ զարին Տեառն թոշակ յետին»: Կաթողիկոսին հանձնելով մեծաթիվ «զանձս ոսկւոյ եւ արծաթոյ»՝ պատվիրում է բաշխել «տնանկս և յաղքատս»<sup>4</sup>: Միաժամանակ վստա-

---

<sup>1</sup> **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., § 680, սյունակ 1156: Փաստերի բացակայության պատճառով հայր Ալիշանը նույնպէս դժվարանում է աներկբա կարծիք հայտնել այդ հարցում, սակայն նախապատվությունը տալիս է Դվինին, որտեղ գտնվում էր կաթողիկոսարանը (տե՛ս **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 489-490): Մ. Չամչյանը հայտնում է, որ թագադրման արարողությունը տեղի է ունեցել Շիրակ գավառի Անի քաղաքում (տե՛ս **Չամչյան Մ.**, նշվ. աշխ., էջ 703):

<sup>2</sup> Տե՛ս **Վարդանյան Վ.**, IX դարի երկրորդ կեսին պետություն և եկեղեցի հարաբերությունները // «ՊԲՀ», 2003, թիվ 2, 231:

<sup>3</sup> **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 443:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 445:

հում է հայրապետին գանձարանների լեփ-լեցուն իրերը, ձիերի երամակները, կռվերի նախիրները, ոչխարների հոտերը բաշխել ուղղափառ եկեղեցիներին, որպես սուրբ պատարագի նվերներ: Թագավորական և իշխանական նվիրատվությունները վանքերին և եկեղեցիներին պատահական երևույթ չէին: Նրանք գիտակցում էին, որ կրոնական հաստատությունները իրենց վատահեղի հենարանն են, ուստի ջանում էին ամեն կերպ ամրապնդել և հզորացնել դրանք<sup>1</sup>:

Գևորգ կաթողիկոսը Հայոց եկեղեցու ծեսով հավուր պատշաճի կազմակերպում և գլխավորում է Աշոտի հուղարկավորության հանդեսը. կաթողիկոսին ուղեկից էին ընտրյալ զինվորները, որոնք տանում էին կաթողիկոսի զինանշանն ու գավազանը, իսկ նրա առջևից քայլում էին այլ հոգևորականներ, որոնք «վախճակարան սաղմոսերգութիւնս եւ զձայնս արհնութեանց նուագէին»<sup>2</sup>: Աշոտի երեք որդիները՝ «գահերէցք տան արքայի, եւ այլ եւս բարեկամք հետամտէին զկնի դագաղացն»<sup>3</sup>: Նրանց հետևում էին նախարարագուն իշխաններ և անհամար բազմություն «ռամկացն եւ անռամկացն», որոնց մեջ զգալի էին «կուսանս ողբերգակս եւ արտաւերաթոր կականումն եւ աշխարանս տիկնանցն եւ տանտիկնանցն»<sup>4</sup>:

Ըստ գահաժառանգության հին հայկական սովորության՝ գահն Աշոտի մահից հետո պետք է անցնէր նրա ավագ որդի իշխանաց իշխան Սմբատին: Սակայն արքայական թագին տիրանալու հավակնություն ուներ նաև Աշոտ Ա-ի եղբայր Աբաս սպարապետը, որը փորձում է իր կողմը գրավել վրաց գահերեց իշխան Ատրնէրսեհին:

Հոր մահվան բոթը ստանալով՝ թագաժառանգ Սմբատը վերադառնում է Շիրակավան: Բագարանում Աշոտին «ի քնարանի հարց իւրոց» հուղարկավորելուց հետո Շիրակավան է ժամանում նաև Գևորգ կաթողիկոսը՝ մխիթարելու և հանգստացնելու Սմբատին, հավանաբար նաև պաշտոնական տեսք տալու նրա կողմից թագավորության ղեկը ստանձնելու գործընթացներին:

Սմբատին ցավակցելու առիթով Շիրակավան է այցելում նաև վրաց Բագրատունիների տոհմի ներկայացուցիչ, գահերեց իշխան Ատրնէրսեհը: Վերջինս հորդորում է Սմբատին «զսեւաթոյր զգեստու նորա զգեցումն ի բաց թաւթափէ», միևնույն ժամանակ քաջալերում և խորհուրդ է տալիս «թագաւորական զգեստուց զգեցմամբ» իր ձեռքը վերցնել թագավորության ղեկը<sup>5</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս **Գրիգորյան Գ.**, Սյունիքի վանական կալվածատիրությունը IX-XIII դարերում, Երևան, 1973, էջ 70:

<sup>2</sup> **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 446:

<sup>3</sup> Աշոտի չորս որդիներից հուղարկավորությանը ներկա էին Դավիթը, Սահակը և Շապուհը: Ավագ որդին՝ Հայոց իշխան Սմբատը, Գուգարքի կողմերում գտնվելու պատճառով չէր մասնակցում հոր հուղարկավորությանը: Վանանդում գտնվելու պատճառով բացակայում էր նաև Աշոտի եղբայր սպարապետ Աբասը:

<sup>4</sup> **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 446:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 447:

Սմբատից «մեծամեծ եւ պատուական ընծախիք» ստանալով՝ վրաց իշխանը վերադարձի ճանապարհին Կարսում հանդիպում է Աբասին, որը կասկածներ ուներ, թե Ատրնէրսեհը Սմբատին հրահրում է իր դեմ: Այդ պատճառով Աբասը «կալեալ կապէ գնա երկաթի շղթախիք եւ ղնէ ի բանտի ի բերդին Կարուց»<sup>1</sup>: Տեղի են ունենում ռազմական ընդհարումներ Սմբատի և Աբասի գլխավորած զորքերի միջև: Եղբայրասպան բախումներին վերջ տալու և Ատրնէրսեհին ազատելու առաքելությամբ Կարս է ուղևորվում Հայոց հայրապետը: Ատրնէրսեհի ազատության դիմաց Աբասը պահանջում է վրացական երկու բերդ և «գԴավիթ զորդի իւր գրաւական»: Այս կապակցությամբ «յետկար երդմանն կնքեալ, տայր ցհայրապետն մեծ»: Ուխտադրուժ Աբասը, ստանալով պահանջածը, ազատ չի արձակում Ատրնէրսեհին «քամահեալ եւս զմիջնորդութիւն կաթողիկոսին մեծի»: Ապարդյուն ջանքերից դառնացած կաթողիկոսը տեղափոխվում է Շիրակ: Սմբատը վերսկսում է պատերազմն Աբասի դեմ և պաշարում Կարսի բերդը: Վերջինս, հայտնվելով դժվարին կացության մեջ, հաշտություն է խնդրում և որոշակի երաշխիքների դիմաց ազատ արձակում վրաց իշխանին<sup>2</sup>:

Այդ դեպքերից քիչ անց Ահմադ իբն Մուհամմադ խալիֆան Ատրպատականի ոստիկան Սաջյան Մուհամմադ Ափշինի միջոցով արքայական թագ է ուղարկում Սմբատին<sup>3</sup>: Թագի հետ ուղարկում է նաև «ոսկիակուռ զգեստ եւ նժոյգս իբրեւ աւղապարիկս ի զարդս եւ ի զէնս ոսկիակուռս պճնապայծառս»: Թագահանդեսը տեղի է ունենում Երազգավորսում՝ Սմբատի կառուցած Սբ. Փրկիչ եկեղեցում<sup>4</sup>: Թագադրության ներկայացուցչական հանդեսին մասնակցում էին «Եպիսկոպոսն Սիւնեաց Յովհաննէս, բդեշխն Վրաց Ատրնէրսեհ, և իշխանն Սիւնեաց Աշոտ և իշխանն Արծրունի Գագիկ այլովք իշխանօք»<sup>5</sup>: Ավետարանական նվիրական աղոթքներ հնչեցնելով՝ Հայոց հայրապետը «աւծեալ ի գիծս եւ ի գիրս եւ ի նկարս տեսականս զոսկէճամուկ զգեցութիւնսն, եւ եղեալ ի գլուխ զթագ թագաւորութեան նորս»<sup>6</sup>: Այդպիսով Գևորգ կաթողիկոսը ոչ միայն օրհնում, այլև թագադրում է նաև Սմբատ Բագրատունուն՝ նրա ուսերին զցելով թագավորական ծիրանին:

---

<sup>1</sup> **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 447:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 448:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում: Այս մասին նույնպես վկայություն ունի Ասողիկը, որը տարբերվում է Հովհաննէս Դրասխանակերտցու տեղեկությունից: Ըստ Ասողիկի՝ Սմբատի կրտսեր եղբայր Շապուհն անձամբ գնում է Ափշինի մոտ և, նրանից ստանալով արքայական թագը, «բերեալ ղնէ ի գլուխ Սմբատայ եղբար իւրոյ՝ հաստատելով զթագաւորութիւն նորս» (**Ստեփանոս Տարանեցի Ասողիկ**, նշվ. աշխ., էջ 743):

<sup>4</sup> Հաւաքումն պատմութեան **Վարդանայ վարդապետի**, էջ 86:

<sup>5</sup> **Ստեփանոսի Սիւնեաց** Եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, գլ. ԼԶ, էջ 128:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 448: Սյունյաց պատմիչն այս անգամ նույնպես «օժանէն թագաւոր Հայոց» ձևակերպումով է նկարագրում թագադրության արարողությունը (տե՛ս **Ստեփանոսի Սիւնեաց** Եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, գլ. ԼԶ, էջ 128):

Սպարապետ Աբասն իր թագավորական հավակնությունների ձախողումը վերագրում է Գևորգ կաթողիկոսին, «իբր գնա գոլ պատճառ իւրում զրկութեանն եւ Սմբատայ թագակապութեանն»: Աբասն ու իր կողմնակիցները զանազան զրպարտագրերով և բանասարկություններով ձգտում են հասնել Գևորգ կաթողիկոսի աթոռագրկմանը, ինչպես նաև մատնել նրան «զճարակ հրոյ բանս բամբասանաց հրոյ զարբոյ կաթողիկոսէն խոխտեալ յաւդէին»: Այս գործում նա իրեն աջակից է դարձնում «զմանս ապիրատս զուգակցեալ զրաբան չարիմացութեանն», որոնք կարծում էին, թե «կարել կարկատել զանկումն սրբոյ կաթողիկոսին»<sup>1</sup>: Աբասը չարամիտ ամբաստանություններով լի նամակներ է հղում հոգևորականներին, նախաձեռնում շարժում ընդդէմ Գևորգ կաթողիկոսի: Նա փորձում է այդ գործում իրեն դաշնակից դարձնել նաև ժամանակի փառաբանված հոգևորականներից մեկին՝ Սևանի առաջնորդ Մաշտոց վարդապետին՝ խոստանալով նրան «ի պատիվ հայրապետութեան փոխանակ նորա կացուցանել»: Աբասը փորձում էր օգտագործել այն հակասությունները, որոնք ծագել էին կաթողիկոսի և Մաշտոց վարդապետի հարաբերություններում: Նա ենթադրում էր, թե Գևորգ կաթողիկոսից ստացած նզովքը և վիրավորանքն առիթ կծառայէր, որ Մաշտոցը զգացմունքայնության ազդեցության տակ միանա իրենց խմբին: Սակայն ինչպես վայել է սրբակրոն հոգևորականին, Մաշտոց վարդապետը տուրք չի տալիս սաղարանքներին և չի միանում «ի ժողովս չարացն» և զրավոր պատասխանով շարադրում է իր հակափաստարկները: Նրբանկատորեն մեծարելով Աբասին և հարգանքով վերաբերվելով նրա իշխանությանը՝ Մաշտոցը հայտնում է, որ չմիանալու իր որոշումը բխում է աստվածային «հնազանդիլ Աստուծոյ առաւել քան մարդկան» պահանջից: Նա ոչ միայն չի ընդունում այն միտքը, որ նամակի բոլոր գլուխները «ամբաստանութիւն էր զմեծէ հայրապետէն եւ զփոխանորդէն Քրիստոսի», այլև արդարացի է համարում իր նկատմամբ կայացված նզովքի վճիռը և հայտարարում. «Իմ նզովք դատապարտութեան յաւետ յիրաւի եւ արժանի էր. եւ զի վրիպեցայ եւ ըստ արտուղի անկեալ ինքնահրաման բարձի զխտրոց սուրբ հարցն»<sup>2</sup>:

Գևորգ կաթողիկոսին ուղղված մեղադրանքները նա անհիմն է համարում, «զնորա զանչափ բարեբարոյսն» շեշտելով՝ հավելում է, որ չի կարելի զրպարտել «ի ծերութեան դար հասեալ» մարդուն, որն այդպիսի բաները «զանց է արարեալ զաստեալք ի մանկութենէ»<sup>3</sup>: Իրերի դրությանը լավատեղյակ վարդապետը խորհուրդ է տալիս չառաջնորդվել «անքննաւ լսելեալք, որ ոչ վայել է ձերում գլխաւորութեանդ»<sup>4</sup>: Մարդկային ամենադաժան անեծքներն է սահմանում իր համար, «եթէ ինչ շարժեցայց կամ զգացայց տեսանել

<sup>1</sup> **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 448:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 450:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Նույն տեղում:

կամ լսել խաւսել զարդարոյն զանիրաւութիւն, զապիրատութիւն ի բարձունս խաւսելով, զլեզուս ածել զերկրաւ՝ պարտոյաթափ եղեալ, եւ դաւղանջել ի սուր շրթունս»<sup>1</sup>: Հայտնելով իր բացասական վերաբերմունքն անօրինական ձեռնարկին և հրաժարվելով ձեռքերը «յամբառնալ յաւծեալն Աստուծոյ»՝ Մաշտոց վարդապետն առարկություն չընդունող տոնով հայտարարում է. «Իմն ա՛յդ է. եւ յայդմանէ զիս ոչ ոք կարէ փոխել՝ ո՛չ գեհենին երկիւղիւ եւ ո՛չ արքայութեանն խոստմամբ»<sup>2</sup>: Հորդորում է հետ կանգնել անիրավ ձեռնարկից, հիշեցնում ոչ վաղ անցյալում Հովհաննէս Ովայեցի կաթողիկոսին (833-855) վերագրված հայոց իշխանաց իշխան Բագարատ Բագրատունու հանիրավի մեղադրանքը, ակնարկում զրպարտողների դառնակսկիծ ճակատագիրը, «որում ամենեքեան իսկ զիտակք եմք կորստեան կորստականացն»<sup>3</sup>:

Մաշտոց վարդապետը դեմ չէ քննության համար ժողով գումարելուն, բայց այն չպետք է լինի «ժողովք չարաց, պաշարողաց, քինահան հրոսողաց», որոնց նմանները շատ են լինում ժողովներում: Ուստի առաջարկում է, որ այդտեղ վկայություն տվողները «ապաշխարեցեն նախ մեղաւորքն խորգով եւ մոխրով, կրանաւորեալ սրտի մտաւք, եւ ապա յետ ժամանակին հաւատարիմ բանք նոցա լինիցին»<sup>4</sup>: Իսկ հեռավոր վայրերից եկած եպիսկոպոսները լինեն արդարացի ընտրվածներ, «յորոց վերայ ոչ լինիցին կարծիք ատելութեան»: Ազդեցիկ խոսքով պաշտպանելով կաթողիկոսին՝ Մաշտոցը նրանից հեռացնում է ամեն տեսակի կասկած: Գևորգ կաթողիկոսին գահընկեց անելը և նրա փոխարեն մեկ ուրիշին ընտրելը նա նույնքան անհնար է համարում, որքան «բուռն զաւրութեամբ եւ կամ կամակոր մտաւք ընդ Աստուծոյ կրուել»<sup>5</sup>:

Մաշտոցի պատասխան նամակն Աբասի ձեռնարկի ձախողման ազդանշանն էր, քանի որ այդ հարցում առանցքային դերակատարում էր վերապահված հեղինակավոր վարդապետին: Այլ տեղերից ստացած պատասխանները նույնպես չէին արդարացնում նրա ակնկալիքները, ավելին՝ նա արժանանում է «բազում յանդիմանակաց մեղադրութիւնս»: Աբասի ծրագիրն ամբողջությամբ տապալվում է, զրպարտողներն արժանանում են աստվածային տարատեսակ պատիժների. «Ոմանք եւս ի խրոխտապանձ մոլենախանձ զրաբանողացն աստուածասաստ իմն գոգցես բարկութեամբ հարեալ կորեան», մեկ ուրիշի շրթունքները, ինչպես հայտնի է շատերին՝ «որդնեոաց լքեալ», երրորդի որովայնի աղիքներն են թափվում, իսկ մի պիղծ՝ «տապախառն հրով վառեալ, եւ խաղաւարտ ի վերայ եռացեալ մեռանէր»: Զրպար-

<sup>1</sup> **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 451:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 452: Վարդապետի ակնարկը վերաբերում է հայ աշխարհիկ և հոգևոր այն բազմաթիվ գործիչներին, որոնց կալանավորեց Բուղան և արքունիք խալիֆայության մայրաքաղաք Սամարա: Նրանց ստիպում էին կրոնափոխ լինել և ընդունել իսլամ:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 454:

<sup>5</sup> Նույն տեղում:

տողների մի մասն էլ՝ արդարացի պատժից երկյուղելով, մեղայականով գնում է «առ ոտս հայրապետին... եւ թողութիւն գտին»<sup>1</sup>: Նույնիսկ դավադիրների պարագլուխը՝ Աբաս սպարապետը, երկնչելով աստծո արագահաս դատաստանից, «բազմահառաչ պաղատանաւք եւ արտասուաւք անկեալ առ ոտս հայրապետին», թողություն էր խնդրում իր մեղքերի և մոլորությունների համար: Կաթողիկոսը նրան ևս «սրտի սիրով ըստ հաւատարիմ խնդրոյին» արժանացնում է «թողութեան և արհնութեան»:

Սկզբնաղբյուրների լռությունը վկայում է, որ Գևորգ կաթողիկոսը գործուն քայլեր չի ձեռնարկել իր դեմ ձևավորված շինծու ընդդիմությունը բացահայտելու և չեզոքացնելու ուղղությամբ: Հայոց հայրապետը վայելում էր աշխարհիկ և հոգևոր ավագանու անվերապահ աջակցությունը Սմբատ թագավորի գլխավորությամբ և այդ պատճառով Աբասի ձախավեր ձեռնարկին լուրջ չի վերաբերվել: Ավելին՝ կաթողիկոսն ընդգծված բարեմտություն է ցուցաբերում զրպարտողների նկատմամբ և մեծահոգաբար ներում նրանց մեղքերը: Հրաժարվելով իր անհեռանկար հավակնություններից՝ Աբասը համերաշխում է Սմբատին, իսկ դրանից որոշ ժամանակ անց վախճանվում:

Խնդրո առարկա նամակն ամբողջովին բացահայտում է քննարկվող անձի՝ Գևորգ Բ Գառնեցու մարդկային բարձր նկարագիրը, մտավոր և կամային որակները, ինչպիսիք են վեհանձնությունը, ներողամտությունը, զգացմունքայնությանը տուրք չտալը, անմնացորդ նվիրվածությունը պետությանը և եկեղեցուն:

Գևորգ Գառնեցու օրոք Սևանա կղզում զարգանում է անապատական կյանքը: Այն կապվում է Սևանավանքի միաբանության հիմնադիր (872-897), ապագա հայոց կաթողիկոս Մաշտոց Եղիվարդեցու (897-898) գործունեության հետ: Վերջինս Մաքենցաց վանքում ուսումնառելուց հետո Սյունյաց Դավիթ եպիսկոպոսից (839-856) քահանայական աստիճան է ստանում<sup>2</sup> և օծվում Մաշտոց անունով<sup>3</sup>: Արտավազդիկ մենաստանում սկսած անապատական կյանքը Մաշտոց վարդապետը շարունակում է Սևանա կղզում, որտեղ հռչակվում է սրբակրոն կենցաղով և ուսումնական ու եկեղեցաշեն արդյունավետ գործունեությամբ<sup>4</sup>:

<sup>1</sup> **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 455:

<sup>2</sup> Տե՛ս **Ստեփաննոսի Միւնեաց** եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, գլ. ԼԶ, էջ 126:

<sup>3</sup> Տե՛ս **Ղազարոսյան Ա.**, Մաշտոց Եղվարդեցի կաթողիկոս // «Էջմիածին», 1991, թիվ Ա-Գ, էջ 110: Սևանանավանքի միաբանությունը տվել է երեք կաթողիկոս՝ Մաշտոց Եղիվարդեցի (897-898), Ստեփանոս Գ (970-973) և Մարգիս Ա (992-1019):

<sup>4</sup> Սյունյաց իշխան Վասակ Գաբուռի կնոջ և Աշոտ Ա Բագրատունու դուստր Մարիամի աջակցությամբ Մաշտոցը 874 թ. կղզում կառուցում է Ս. Առաքելոց և Ս. Աստվածածին եկեղեցիները (տե՛ս **Ստեփաննոսի Միւնեաց** եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, գլ. ԼԶ, էջ 126: Հմնտ. **Ստեփանոս Տարսնեցի Ասողիկ**, նշվ. աշխ., էջ 741-742): Աշոտ Ա Բագրատունին առանձնահատուկ դրական վերաբերմունք ուներ Մաշտոց վարդապետի և նրա ծավալված գործունեության նկատմամբ: Վանքի պահպանման ծախսերը հոգալու համար

IX դարի կեսերին Կոստանդնուպոլսի պատրիարք Փոտի՝ Հայոց եկեղեցուն նետված մարտահրավերները լուրջ փորձություն էին հայ հոգևորականության համար: Հայոց եկեղեցու ինքնուրույնության վերացմանը միտված Փոտ պատրիարքի ջանքերը թեև ցանկալի արդյունք չեն տալիս, սակայն նկատելի ազդեցություն են ունենում որոշ հայ հոգևորականների դավանաբանական հայացքների վրա: Նրանցից ոմանք կուլ են տալիս քաղկեդոնական քարոզչության խայծը և, վարդապետական տարբերություններն անտեսելով, լծվում հայ և հույն եկեղեցիների միասնության «սայլին»: Հավանական է, որ քաղկեդոնականությանը հարող հոգևորականներից է եղել նաև Մաշտոց վարդապետը, որը փորձել է շրջանցել դավանաբանական տարբերությունները «ի մէջ մեր եւ քաղկեդոնականացն»: Հայր Օրմանյանի ենթադրությամբ՝ Շիրակավանի ժողովի ժամանակ (862 թ.) կամ դրանից հետո «կրցած է Մաշտոց լայնախոհ գաղափարի հետեւիլ՝ բարեմիտ նպատակով»<sup>1</sup>: Հայոց եկեղեցու ճշմարիտ վարդապետության ճանապարհից նշանավոր վարդապետի շեղվելը չի վրիպում կաթողիկոսի ուշադրությունից: Սկզբում պաշտոնից բխող կարգադրություններով, այնուհետև նգովագրով Հայոց հայրապետը սաստում է մոլորյալ վարդապետին և կասեցնում նրա խոտոր ընթացքը<sup>2</sup>:

Հասկանալի համերաշխությամբ հայ պատմիչները Գևորգ կաթողիկոսի և Մաշտոց վարդապետի միջև ծագած միջադեպը քննարկման նյութ չեն դարձրել՝ հավանաբար «խնայելով մեծ վարդապետին եւ կաթողիկոսութեան հասած անձին պատույն»<sup>3</sup>: Անգամ փաստն արձանագրող Հովհաննես Դրասխանակերտցին միջադեպը հիշատակում է որպես իր երկում մեջբերված նամակի հեղինակի խոսք: Մաշտոց վարդապետն անվերապահորեն ընդունում է Հայոց եկեղեցու դավանաբանության ճշմարիտ ուղուց շեղվելու իր մեղքը և գտնում, որ կաթողիկոսի «նգովք դատապարտութեան յաւէտ յիրաւի եւ արժանի էր. եւ զի վրիպեցայ. եւ ըստ արտուղի անկեալ՝ ինքնահրաման բարձի զխտրոց սուրբ հարցն, որ ի մէջ մեր եւ քաղկեդոնականացն»: Անկեղծորեն զոջալով իր արածի համար՝ «աղաթահայց ապաշխարութեամբ եւ առաջի անկմամբ պատառեցի նովին սուրբ ձեռուք զձեռնագրեալսն զինէն կար-

---

իշխանաց իշխանը միաբանությանն է նվիրաբերում Վարսեր, Յամաքաբերդ, Գոմաձոր, Բերդք, Ուռյաց տափ գյուղերը «և այգիս ի Գառնի և յԵրևան և այլ տեղիս»: Նա նաև այցելում է Սևանա կղզի, տեսակցում և Մաշտոց վարդապետին է ընծայում Կոստանդնուպոլսի պատրիարք Փոտի ուղարկած Ս. Խաչի մատուցքը (տե՛ս **Ստեփաննոսի Միլնեաց** եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, գլ. ԼԶ, էջ 127, **Յովսէփյան Գ.**, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 91):

<sup>1</sup> **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., § 678, պունակ 1153:

<sup>2</sup> Անընդունելի է հայոց կաթողիկոսի և այդ ժամանակաշրջանի նշանավոր վարդապետի միջև ծագած միջադեպը բացատրել ժողովրդի մեջ հեղինակություն վայելող Մաշտոց վարդապետի նկատմամբ Գևորգ Բ-ի անբարյացկամ վերաբերմունքով (տե՛ս **Ղազարոսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 112):

<sup>3</sup> **Օրմանյան Մ.**, նշվ. աշխ., § 678, պունակ 1152:

ծեարք»<sup>1</sup>: Լայնախոհ վարդապետի՝ սեփական սխալն ընդունելու համարձակությունը կանխում է Հայոց եկեղեցու երկու խոշոր անձնավորությունների միջև հակասությունների խորացման հետագա ընթացքը, և միջադեպն այսօր քանով փակվում է<sup>2</sup>:

Գևորգ Գառնեցու և Մաշտոց վարդապետի միջև լավ հարաբերությունների մասին փոքրիկ վկայություն ունի Սյունյաց պատմիչը: Իշխանական ծագումով սյունեցի մի երիտասարդ, որի անունն էր Գևորգ, հրաժարվելով աշխարհիկ վայելքներից, իրեն նվիրում է հոգևոր կյանքին, ցանկանում ստանալ քահանայական աստիճան: Մաշտոց վարդապետի մոտ Սևանավանքի կրթարանում նա կարող էր «ուսանիլ և կրթիլ յամենայն վարս առաքինութեան»: Քանի որ Մաշտոց վարդապետն իրավասու չէր նրան քահանա ձեռնադրելու, ուստի նրան «յուղարկէ մաղթողական թղթով առ կաթողիկոսն Հայոց Գեորգ»<sup>3</sup> և խնդրում քահանայական աստիճան շնորհել իր սանին: Գևորգ կաթողիկոսը կատարում է Մաշտոցի խնդրանքը, «հրամայէ ձեռնադրել զնա քահանայ», որից հետո վերադարձնում են Երիցավանք: Այս դրվագը վկայում է, որ նրանք երկուսն էլ ունեցել են Հայոց եկեղեցու զարգացման նույն տեսլականը, այն է՝ ունենալ նվիրյալ և խորապես հավատացյալ հոգևորականներ, որոնք կանգուն կպահեն ազգային կառույցի ուղղահայացը:

Հայոց եկեղեցու նվիրապետական կառույցի ամրապնդումը, առանձին աթոռների անջատողական հավակնությունների կանխումը և դավանանքային շեղումների չեզոքացումը եղել են Գևորգ Գառնեցու գործունեության առաջնահերթությունները: Իր «Յաղագս ապստամբութեան տանն Ադուանից»<sup>4</sup> թղթում Անանիա Մոկացին պատմում է, որ VIII դարի սկզբին հայոց Եղիա Արժիշեցի կաթողիկոսին (703-717) գործնական միջոցներով հաջողվում է անհնազանդություն ցուցաբերած Ադվանից աթոռը վերստին դնել հայոց կաթողիկոսության ենթակայության տակ և զսպել Հայոց արևելից կողմերում տարածում գտած քաղկեդոնական զարգացումները: Մինչև Գևորգ Գառնեցու գահակալությունն Ադվանքում իրավիճակը համեմատաբար հանդարտ էր, և համաձայն Հայոց եկեղեցու նվիրապետական կարգի՝ Ադվանքի հոգևոր առաջնորդները ձեռնադրվում էին հայոց կաթողիկոսների կողմից: Սակայն նրա օրոք Ադվանքում նորից տեղ են գտնում հնավանդ կարգից շեղվելու դեպքեր. Ադվանից կաթողիկոսները ձեռնադրության և օծման համար չէին գնում

---

<sup>1</sup> **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 450:

<sup>2</sup> Նամակի բնօրինակից որոշ արտահայտություններ, հավանաբար միտումնավոր, զեղչելով՝ հայր Չամչյանն այլ մեկնաբանություն է տալիս վերոհիշյալ տողերին: Ըստ նրա՝ Մաշտոցը «յաւէտ յիրաւի եւ արժանի» նգովքի թուղթ է գրել՝ ուղղված հակաքաղկեդոնական դիրքորոշում ունեցողներին (տե՛ս **Չամչյան Մ.**, նշվ. աշխ., էջ 725):

<sup>3</sup> **Ստեփաննոսի Միւնեաց** եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, գլ. ԽԵ, էջ 178:

<sup>4</sup> Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տանն Ադուանից // «Արարատ», 1897, Գ, էջ 129-144 (այսուհետև՝ Յաղագս ապստամբութեան տանն Ադուանից):

Հայոց կաթողիկոսի մոտ, և իրենք էին տեղում կազմակերպում այդ արարողությունները: Աղվանքի Հովսեփ կաթողիկոսի մահից հետո կաթողիկոս է դառնում Մեծկողմանքի Սամվել եպիսկոպոսը, որը «զանկատարն առնու ձեռնադրութիւն յիւրմէ եպիսկոպոսէն»<sup>1</sup>: Նման ինքնազլխությունից բորբոքված՝ Աղվանքի իշխաններն այդ մասին հայտնում են Գևորգ կաթողիկոսին, որը «կանոնական սահմանադրութեամբ գրեալ առ իշխանն Հայոց՝ մաղթէ օգնել իրացն և առնել զաւարտն ի խաղաղութիւն»<sup>2</sup>: Գործին միջամտում է իշխանաց իշխան Աշոտ Ա Բագրատունին և պահանջում հետևել ս. Գրիգորի սահմանած կանոններին և «զձեռնադրութիւն առնուլ ի Հայոց»: Աշոտ Ա-ի և Աղվանքի իշխանների համաձայնությամբ «անձնահաճն» Սամվելը մեկնում է Դվին և 877 թ. երկրորդ ձեռնադրությունը ստանում Գևորգ կաթողիկոսից<sup>3</sup>:

Շատ չանցած՝ իրավիճակը գրեթե նույնությամբ կրկնվում է: 890-ական թվականներին Ափշին ամիրայի ասպատակությունների հետևանքով Հայաստանում ստեղծված վիճակը Հայոց արևելից կողմերում անջատողականության նոր առիթ տվեց: Այդ օրերին մահանում է Աղվանքի Սամվել կաթողիկոսը, և քանի որ Հայոց կաթողիկոսը գերեվարված էր, տեղի եպիսկոպոսների ժողովն առանց կաթողիկոսական ձեռնադրության ուն Հունանի ընտրում է առաջնորդ. «Կարգեցին զնա (Հունանին – Վ. Ա.) ինքեանց կաթողիկոս»<sup>4</sup>: Մրանով խախտվում էր այն կարգը, որով Հայոց արևելից կողմերի աշխարհիկ և հոգևոր ավագանին ընտրում էր Աղվանից կաթողիկոսի թեկնածուին, որին ձեռնադրում էր Հայոց կաթողիկոսը<sup>5</sup>: Գերությունից ազատվելուց հետո Գևորգ Գառնեցին իր փրկության գործում մեծ դեր խաղացած Աղվանից Համամ թագավորի խնդրանքով Հունանին ձեռնադրում է Աղվանից կաթո-

---

<sup>1</sup> **Մովսես Կաղանկատուացի**, Պատմություն Աղուանից աշխարհի, քնն. բնագիրը և ներածությունը՝ Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ գիրք Գ, գլ. ԻԲ, էջ 334:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Հայր Ալիշանը գրում է, որ այս կապակցությամբ «բարեկարգութեան ժողով մը այլ եղավ, եւ Գեորգ կանոններ դրաւ Հայոց և Աղվանից աթոռոց յարաբերութեան վրայօք» (**Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 476): Սկզբնաղբյուրներում եկեղեցական հատուկ ժողով չի հիշատակվում: Կարծում ենք՝ մեծ հայագետին նման ենթադրության հիմք է տվել հավանաբար Կաղանկատուացու «կանոնական սահմանադրութեամբ գրեալ» արտահայտությունը:

<sup>4</sup> Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, էջ 138: Հունանն անհնազանդ և ընդդիմադիր հոգևորական է եղել: Նա կաթողիկոսարանում «դրան եպիսկոպոս» էր, որտեղից «ապստամբողական կարգաւ» փախել էր Աղվանք (տե՛ս նույն տեղում):

<sup>5</sup> Տե՛ս **Եղիազարյան Ա.**, IX դ. վերջի և X դ. առաջին կեսի Ամենայն Հայոց կաթողիկոսների աթոռակալության ժամանակագրության շուրջ // «Աստվածաբանական և կրոնական հոդվածների ժողովածու», Գ, 2020, էջ 162: Աղվանից կաթողիկոսների ինքնագլուխ, առանց հայոց կաթողիկոսի ձեռնադրությունը Բ. Ուլուբաբյանը համարում է հարկադրյալ քայլ՝ մտացածին համարելով այն թեզը, թե հայոց կաթողիկոսների համար այդ ծանր պայմաններում Աղվանքի հոգևորականները մտածում էին նոր օգնականներ որսալու մասին, որպեսզի իրականացնեն հայոց կաթողիկոսության ենթակայությունից դուրս գալու իրենց հնամենի ցանկությունը (տե՛ս **Ուլուբաբյան Բ.**, Հայոց արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Երևան, 1998, էջ 164):

ղիկոս: Աղվանքի հոգևոր առաջնորդի՝ Հայոց կաթողիկոսից չձեռնադրվելն ապստամբություն համարող Անանիա Մոկացին ցավով արձանագրում է, որ Գևորգ հայրապետի մահից հետո «սովորութիւն կալաւ և դիրադարձ զեղեալսն. իբրև վաղճանէր Յունանն՝ ձեռնադրէին նոյն սովորութեամբ զհարագատ նորին զոմն Սիմեոն, և ի նմանէ Դաւիթ, և ի նմանէ Մահակ, և ի նմանէ Գագիկն, առ որ յայժմ բանս է. տեսեալ ապստամբութեամբ զամս ԿԹ. և զժամանակս հայրապետաց հնգից, մինչև ի մեր նուաստութիւնս»<sup>1</sup>:

Գևորգ կաթողիկոսի օրոք Սյունյաց աթոռը, պահպանելով իր բարձրապատիվ կարգավիճակը Հայոց եկեղեցու նվիրապետական կառուցվածքում, եղել է ենթակա Հայոց կաթողիկոսությանը: Դատելով սկզբնաղբյուրների տեղեկություններից՝ Գևորգ Գառնեցու զահակալության տարիներին, ի դեմս նրա, հայոց կաթողիկոսության և Սյունյաց աթոռի միջև հաստատվել են փոխադարձ հարգանքի և արժևորման հարաբերություններ: Այդ մասին է վկայում այն փաստը, որ Գևորգի օրոք Սյունյաց եկեղեցում վերականգնվում են եկեղեցական որոշ կարևոր արարողություններ: Ըստ Աղվանից պատմիչի՝ Գևորգի հայրապետության, Սյունյաց Աշոտ իշխանի և տեր Սողոմոն եպիսկոպոսի օրոք «վաղնջուց դադարեցուցեալ քարոզութիւնն Սիւնեաց... վերստին նորոգեաց»<sup>2</sup>: Ստեփանոս Օրբելյանը հաղորդում է, որ «առաքինի» հորջորջված տեր Սողոմոնի (866-882) մահից հետո Սյունյաց իշխանները և «յամենայն ազատաց նոցա, և վանաց երիցունք աշխարհիս, նաև աւագ տանուտեարք ըստ զաւառաց զաւառաց» նոր հոգևոր առաջնորդ են ընտրում Հովհաննես փակակալին և ձեռնադրության համար ուղարկում Գևորգ կաթողիկոսի մոտ<sup>3</sup>: Հովհաննեսը ձեռնադրվում է Սյունյաց առաջնորդ և, մեծաշուք պատվով վերադառնալով, «նստի յաթոռ մետրապօլտութեան տանս Սիսական»<sup>4</sup>:

Հիշյալ փաստերը վկայում են, որ Գևորգ Գառնեցուն հաջողվել է ժամանակավորապես չեզոքացնել Հայոց եկեղեցու նվիրապետական ամբողջականությանը սպառնացող վտանգները, արգելել օտար դավանանքների տարածումն Աղվանքում և Սյունիքում: Նշված ձեռքբերումները մեծապես պայմանավորված էին այն հանգամանքով, որ թե՛ բուն Հայաստանում և թե՛ Հայոց արևելից կողմանքում Հայոց կաթողիկոսը և իշխանները գործել են միասնաբար:

Գևորգ հայրապետի օրոք՝ «ի սորա (Սմբատի – Վ. Ա.) յերրորդ ամի թագաւորութեանն», 893 թ. Դվինում տեղի է ունենում ավերիչ երկրաշարժ<sup>5</sup>, որի պատճառած ավերածությունները մի քանի անգամ ավելի մեծ էին 863 թ.

<sup>1</sup> Յաղագս ապստամբության տանն Աղուանից, էջ 139:

<sup>2</sup> **Մովսես Կաղանկատուացի**, նշվ. աշխ., էջ 335:

<sup>3</sup> **Ստեփաննոսի Սիւնեաց** եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, գլ. ԼԹ, էջ 162: Սյունյաց եպիսկոպոս Հովհաննես V-ն (882-918) է մասնակցել է Աշոտ Ա Բագրատունու թագադրման արարողություններին:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> **Թովմա Արծրունի եւ Անանուն**, նշվ. աշխ., էջ 234:

Զաքարիա Չագեցու օրոք տեղի ունեցած երկրաշարժի վնասներից: Թովմա Արծրունին պատմում է, որ Դվինը «ի հիմանց տապալեալ» էր, մարդիկ երկրի երեսին բացված ճեղքերից գահավիժում էին անդունդ, իսկ ոմանց համար հենց իրենց տները «գերեզմանք նոցին եղեն»<sup>1</sup>: Չոհերի թվի մեծության պատճառով (ըստ Թովմա Արծրունու՝ մոտ 70 հազար) գերեզմանոցներում բոլորին տեղը չէր բավարարում, այդ պատճառով շատ դիակներ «վիսու եւ ի խորափիտս եւ ի դարափլակս ընկեցեալ ծածկէին»<sup>2</sup>: Երկրաշարժը ներկայացվում է իբրև «տուրբուխի վաճառականութեամբ եւ ազգի ազգի պոծութեամբ յափրացեալ յոփացեալ» Դվինի իսլամադավան բնակչության վարքի աստվածային պատիժ: Ի շարս այլ շինությունների և «հաստահեղոյս վկայարանս» ավերվել էր նաև «գաստուածաշէն եկեղեցիս կաթողիկոսարանին»: Այդ պատճառով անասելի ցավ ապրող Հայոց հայրապետը ողջ մնացած հոգևորականների հետ հեռանում է Դվինից: Նա հաստատվում է Վաղարշապատում, իսկ իր նստավայր է դարձնում Ներսես Բ կաթողիկոսի կառուցած Զվարթնոցի եկեղեցին<sup>3</sup>: Դվինի քրիստոնյա բնակչության վիշտն ու ցավն ամոքելու համար Սևանից մխիթարական նամակ է ուղարկում նաև Մաշտոց վարդապետը: Նամակը հրապարակելուց հետո Հովհաննես Դրասխանակերտցին խոստովանում է, որ ոչ միայն իսլամադավանները, այլև քաղաքի քրիստոնյա բնակչությունը նույնպես հեռացել էին աստվածային պատգամներից. «Քրիստոնեայք եւս... խառնակեցաք ընդ հազարացիսն եւ ուսաք զգործս նոցա, որ գտաւ իսկ ի գայթակղութիւն մեզ»<sup>4</sup>:

Զեզոքացնելով Աբաս սպարապետի արքայական հավակնությունները, իր շուրջը համախմբելով իշխաններին և վայելելով Հայոց հայրապետի անվերապահ աջակցությունը՝ Սմբատն ամրապնդում է իր դիրքերը երկրի ներսում և ձեռնամուխ լինում Բյուզանդիայի հետ բարեկամական հարաբերությունների նորոգմանը: Նա հատուկ դեսպանություն է ուղարկում Կոստանդնուպոլիս «ընծայիւք բազմաւք եւ նուիրական պատարագաւք» և իր բարեկամական մտադրությունները հայտնում կայսր Լևոն Զ Իմաստասերի մասին: Հիշելով բազմատեսակ նվերներով Սմբատին փոխադարձաբար պատվելու կայսեր վերաբերմունքը՝ պատմիչը հատուկ ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ «որդի սիրելի կայսր զՍմբատ իւր անուանէր»: 893 թ. կնքվում է առևտրական համաձայնագիր, որով ավելի է կարևորվում Հայաստանի դերը Բյուզանդիայի և Արաբական խալիֆայության երկրների միջև տարանցիկ առևտրում:

Հայ-բյուզանդական համաձայնագիրն առիթ դարձրած՝ Ատրպատականի և Արմինիայի ոստիկան Սաջյան Ափշին ամիրան հարձակվում է Հայաստանի

---

<sup>1</sup> Թովմա Արծրունի եւ Անանուն, նշվ. աշխ., էջ 239:

<sup>2</sup> Յովհաննէս Դրասխանակերտցի, նշվ. աշխ., էջ 458:

<sup>3</sup> Թովմա Արծրունի եւ Անանուն, նշվ. աշխ., էջ 239:

<sup>4</sup> Յովհաննէս Դրասխանակերտցի, նշվ. աշխ., էջ 460:

վրա: Սմբատն Ափշինի դեմ դուրս է բերում 30 հազարանոց զորք և առաջանում մինչև Ատրպատականից ոչ հեռու գտնվող Ռոտոկաց գավառը: Պատագամավորություն ուղարկելով Ափշինի մոտ՝ Սմբատը համոզում է նրան, որ առևտրական համաձայնագրից անհամեմատ ավելի շատ օգուտներ կքաղեն հենց Արաբական խալիֆայությունն ու Ատրպատականը: Հայոց սպառազեն զորքի առկայությունը և Սմբատի բացատրությունը մեղմում են Ափշինի ռազմաշունչ հռետորաբանությունը և ստիպում նրան ժամանակավորապես հրաժարվել իր մտադրություններից: Իր իշխանության ամրապնդման և պետության սահմանների ամբողջացման նպատակով Սմբատը պաշարում է և գրավում արաբների տիրապետության տակ գտնվող Դվինը: Ափշինը, «իբրև ետես զպատշաճաբար յաջողուածս արքային Սմբատայ», 894 թ. մոտենում է հայոց սահմանին, գրավում Նախիջևանը, այնուհետև՝ Դվինը: Սմբատը հայ իշխանների զորաժողով է գումարում և բանակը կենտրոնացնում Արագած լեռան հարավային ստորոտում գտնվող Վժան գյուղում:

Անխուսափելի արյունահեղությունը կանխելու համար հաշտարար առաքելությամբ Ափշինին ընդառաջ է գնում Հայոց կաթողիկոսը՝ հուսալով, որ կկարողանա «զսիրտ քարեղէն նորա կակղել բաւեսցէ, եւ խնամարկել բանաւոր հաւտի Տեառն»<sup>1</sup>: Ափշինը պատշաճ ընդունելություն է ցույց տալիս Հայոց կաթողիկոսին, համաձայնում խաղաղություն հաստատել, եթե Սմբատն անձամբ ներկայանա իրեն: «Արդարամիտ եւ պարզ սրտի այրն Աստուծոյ» Գևորգ կաթողիկոսը չի կոտահում Ափշինի՝ Սմբատին կալանավորելու դավադիր միտքը և խոստանում է Սմբատի հետ ներկայանալ նրան: Սմբատը լավ էր ճանաչում Ափշինին, ուստի հրաժարվում է նրան ներկայանալուց հասկանալով, որ նա նենգորեն իրեն կալանավորելու թակարդ է պատրաստել: Սմբատը ոչ միայն հրաժարվում է Ափշինի մոտ գնալուց, այլև իշխանների հետ նույնն է ինդրում կաթողիկոսին. «Բազում անգամ ամենեցուն աղաչեալ զնա (կաթողիկոսին – Վ. Ա.) չկրկնել զերթալն առ չարաբարոյ հեթանոսն»: Մակայն նրան այդ քայլից ետ պահել չի հաջողվում, քանի որ կաթողիկոսը չէր ցանկանում դրժել «զեղեալ ուխտն ընդ նմա»: Հայրապետը հասկանում էր, թե ինչ չարիք կարող է բերել Հայաստանի գլխին նենգ ոստիկանը, այդ պատճառով անտեսելով ակնհայտ վտանգները՝ վերադառնում է Ափշինի մոտ, որը նրան կալանավորում է և «հրամայլ ունել դնել զնա (կաթողիկոսին – Վ. Ա.) ի շղթայս եւ ի ձեռնակապս երկաթիս»<sup>2</sup>: Այդ դեպքերից երեք օր անց Արագածոտն գավառի Դոդս գյուղի մոտ հայկական և արաբական զորքերի միջև տեղի է ունենում ճակատամարտ, որն ավարտվում է Սմբատի հաղթանակով: Ռազմական ուժով չլուծելով խնդիրը՝ Ափշինը «յաղերս մատուցեալ, հայցէր տալ ցնա զսակն արքունի եւ դնել ուխտ երդման»<sup>3</sup>: Բարեկամության երդումներից և

<sup>1</sup> **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 461:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 461-462, **Սովսէս Կաղանկատուացի**, նշվ. աշխ., էջ 335:

<sup>3</sup> **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., 462:

ընծաների փոխանակումից հետո Ափշինը հեռանում է՝ իր հետ տանելով Հայոց կաթողիկոսին «նովին շղթայիւք»:

Հայոց հայրապետն անմարդկային տանջանքներ է կրում, նրա հետ վարվում են որպես շարքային կալանավորի. «Եւ անդ ի մէջ թշնամեացն՝ մարմնոյ նեղութեամբ բառնայր գրեռն ծանրատաղտուկ տառապանաց. ոչ որոշեալ նմա սպասաւոր ձեռնասուն գոք, որ պատրաստէր նմա մահիճս, կամ ջուր ի ձեռս արկանել, կամ անձեռոցս մատուցանել, կամ սկուտեղ առաջի դնել, կամ ջուր ըմպելոյ առ ի զծարաւ բժշկել»<sup>1</sup>: Երկու ամիս գերության մէջ պահելուց հետո Ափշինը համաձայնում է ազատ արձակել կաթողիկոսին՝ որպես փրկագին «գանձս ոսկոյ եւ արծաթոյ պահանջեր»: Բազմաչար կաթողիկոսը խոստումնագիր է առնում Ափշինից և նրա պայմանը նամակով հայտնում կաթողիկոսարանի գործերը ստանձնած Հովհան վարդապետին՝ ապագա Հայոց կաթողիկոս Հովհաննէս Դրասխանակերտցուն<sup>2</sup>: Հայոց իշխանական և հոգևոր դասը Սմբատ թագավորի գլխավորությամբ հավաքում են պահանջված փրկագինը և ուղարկում Աղվանքի իշխան Համամին<sup>3</sup>: Այդ ժամանակ արդեն Ափշինը հասել էր Փայտակարան՝ իր հետ տանելով նաև գերյալ կաթողիկոսին: Համամ իշխանը, «ի յիւրմէն եւս յաւելեալ ի լրումն» հավաքված գանձին, ուղարկում է ոստիկանին և կաթողիկոսին ազատում է «յանօրէն տաճկաց կապարանէն»<sup>4</sup>: Տառապյալ կաթողիկոսը վերադառնում է Հայաստան իր պաշտոնին: Ժողովուրդը մեծ ուրախությամբ է ընդունում իր առաջնորդին և «յամենայն եկեղեցիս զպաշտան բարեկարգութեան բարձրացուցեալ, անդարար զտէրութեանն կանոն աղալթիցն կատարէին ի փառս Աստուծոյ»<sup>5</sup>:

Ազատվելով գերությունից՝ անձնվեր հոգևորականը չի դադարեցնում

---

<sup>1</sup> **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., 462:

<sup>2</sup> Տե՛ս **Չամչյան Մ.**, նշվ. աշխ., հ. Բ, էջ 717:

<sup>3</sup> Համամը ժամանակի քաղաքական և կրոնական նշանավոր գործիչներից է, սերում է Բագրատունիների տոհմից. «Համամ, որ և Յոհաննէս Բագրատունի» (**Մխիթարայ Այրիվանեցոյ** Պատմութիւն հայոց, ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1860, էջ 55): Ծնվել է մոտ IX դարի 10-ական թվականներին և ապրել մինչև դարավերջ (տե՛ս **Բարխուդարյան Մ.**, Արցախի, Շաքիի և Փառիտսի իշխանությունները IX-X դարերում // «ՊԲՀ», 1971, թիվ 1, էջ 68): Աղվանից պատմիչը վկայում է, որ Համամը և Աշոտ Ա Բագրատունի գործել են նույն ժամանակահատվածում: Աղվանքի բարեպաշտ թագավոր Համամը «գկործանեալ թագաւորութիւն տանս Աղուանից նորոգեաց, որպէս Աշոտ Բագրատունի՝ զՀայոց թագաւորութիւնն» (**Մովսէս Կաղանկատուացի**, նշվ. աշխ., էջ 335): Ն. Աղոնցի կարծիքով՝ Համամը թագավոր է դարձել 893 թվականից հետո (տե՛ս **Աղոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 512): Համամ թագավորի և նրա կնոջ գերեզմանները գտնվում են Արցախի Վարանդա գավառի Ավետարանոց գյուղի հին հանգստարանում (տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հ. 3, Երևան, 1942, էջ 25): Ասվում է, որ Համամը սպանել է եղբորը, որից հետո զոջացել է և դարձել կրոնավոր:

<sup>4</sup> **Մովսէս Կաղանկատուացի**, նշվ. աշխ., էջ 336, **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 463: **Ստեփանոս Տարանեցի Ասողիկ**, նշվ. աշխ., էջ 743), **Ստեփանոսի Միւնեաց** եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, գլ. ԾԱ, էջ 205:

<sup>5</sup> **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 463:

Բագրատունյաց թագավորության շուրջ հայ նախարարների համախմբման գործը, քանզի Հայաստանի հակառակորդ ուժերն ակտիվորեն շարունակում էին հայ իշխանական ուժերի պառակտման իրենց վաղեմի քաղաքականությունը: Նա մեկնում է Վասպուրական, որտեղ ընդդեմ Բագրատունի թագավորների արաբները, ի դեմս Գագիկ Արծրունու, խրախուսում էին կենտրոնախույս ուժերին: Ծերունագարդ կաթողիկոսն այնտեղ հավանաբար փորձել է հաշտության եզր գտնել և միավորել նրանց: Սակայն շատ չանցած Վասպուրականում նա վախճանվում է և թաղվում Տոսպ գավառի Ձորովանքի գերեզմանոցում, որտեղ գտնվում էին Ս. Լուսավորչի գավազանը ու տերունական խորհրդի սեղանը: Գևորգ կաթողիկոսի մահվան տարեթիվի հարցում պատմիչները լուրջ տարաձայնություններ չունեն, և, ըստ էության, հարցն ավելի շատ վերաբերում է տարվա ժամանակամիջոցը որոշակիացնելուն: Խնդրո առարկային ժամանակամերձ մատենագիրները, բացառությամբ Թովմա Արծրունու, Գևորգ Գառնեցու մահվան տարեթիվ են նշում հայոց ՅԽԶ (346) թվականը, որը համապատասխանում է 897 թվականին<sup>1</sup>:

Պատմիչի բնորոշած՝ «Արդարամիտ եւ պարզ սրտիւ այր Աստուծոյ» հայրապետի մահը ժողովուրդը ծանր կորուստ է համարել և մեծ սուգ ապրել: Նրա հայրական հոգատարությունը և ինքնագոհ նվիրվածությունը ժողովրդի մեջ երախտագիտության զգացմունքներ են առաջացրել: Հավանաբար գերության մեջ լինելը և կրած մարդկային տառապանքներն առավել ողբերգականություն են հաղորդել նրա մահվան փաստին: Մովսես Կաղանկատվացու վկայությամբ՝ Գևորգ հայրապետի և Սյունյաց իշխան Աշոտի<sup>2</sup> մահվան կապակցությամբ ողբերգակ կանայք մեծ սուգ ու շիվան էին բարձրացրել՝ ասելով. «Մի եկեսցէ և մի լիցի այսպիսի տարի ի վերայ երկրի, որչափ ազգ մարդկան է»<sup>3</sup>:

Գևորգ Գառնեցու օրոք Հայաստանի տարբեր վայրերում կառուցվել են բազմաթիվ եկեղեցիներ և վանքեր: Հարկ է նշել, որ նրա օրոք հայոց 344 թ. (895) դրվել են «գլուխն ամենեցունց վանորէից և աղբիւր շնորհաբաշխու-

---

<sup>1</sup> Տե՛ս **Յովհաննէս Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 469: Հմմտ. **Մովսէս Կաղանկատուացի**, նշվ. աշխ., էջ 337, **Ստեփանոս Տարսնեցի Ասողիկ**, նշվ. աշխ., էջ 743: Թովմա Արծրունին Գևորգ Գառնեցու աթոռակալության ավարտի ժամկետ է հիշատակում ՅԽԷ (898) թվականը (տե՛ս **Թովմա Արծրունի եւ Անանուն**, նշվ. աշխ., էջ 248): Վերլուծելով մատենագիրների վկայությունները և հիմք ընդունելով Հովհաննէս Դրասխանակերտցու տեղեկությունը՝ Ա. Եղիազարյանն իրավացիորեն եզրակացնում է, որ Գևորգ Գառնեցին վախճանվել է 897 թ. ապրիլին (տե՛ս **Եղիազարյան Ա.**, IX դ. վերջի և X դ. առաջին կեսի Ամենայն Հայոց կաթողիկոսների աթոռակալության ժամանակագրության շուրջ, էջ 171):

<sup>2</sup> Սյունյաց Աշոտ իշխանը Փիլիպեի որդին էր, իշխել է 890-ական թվականներին (տե՛ս **Ալիշան Ղ.**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 17): Հիշյալ Աշոտը մասնակցել է Մմբատի թագադրման հանդեսին:

<sup>3</sup> **Մովսէս Կաղանկատուացի**, նշվ. աշխ., էջ 337:

թեան տանն Միսական» Տաթևի վանքի հիմքերը<sup>1</sup>: Հայոց թագավոր Աշոտ Ա Բագրատունու և հոգևոր առաջնորդ Գևորգ Գառնեցու համախորհուրդ և բեղուն աշխատանքի արդյունքն այսպես է նկարագրում Ասողիկը. «Պայծառացոյց զուխտս սրբոյ եկեղեցոյ եւ զարդարեաց զեկեղեցիս Հայաստանեայց»<sup>2</sup>:

**Վարդան Ալեքսանյան – Գևորգ Բ Գառնեցի՝ հայոց թագավորության վերականգնումը խորհրդանշող կաթողիկոսը**

IX դարի վերջը հայոց պատմության մեջ նշանավորվեց չորսուկես դար առաջ կործանված թագավորության վերականգնումով, որը հայ ժողովրդի բոլոր խավերի միասնական պայքարի արդյունքն էր: Այն իրականացավ Բագրատունիների գլխավորությամբ և Հայոց եկեղեցու գործուն աջակցությամբ: Վերջինս ձգտում էր ազատվել այլազգիների կրոնական անհանդուրժողականությունից և հալածանքներից: Համագործակցելով Աշոտ Ա Բագրատունու հետ՝ Գևորգ Բ Գառնեցին իր հոգևոր-քաղաքական իրավասության սահմաններում բարելավել է հայ իշխանների հարաբերությունները և հաշտարար առաքելության շնորհիվ երկրում ձևավորել հարաբերական համերաշխության մթնոլորտ: Ամրագրելով Հայոց եկեղեցու բարձր դիրքը պետության մեջ՝ նա ակտիվորեն մասնակցել է երկրի արտաքին և ներքին քաղաքական հարցերի լուծմանը: Հանուն երկրի անվտանգության և արյունահեղության կանխման՝ հոգևոր առաջնորդը բազմիցս ընդառաջ է գնացել անխուսափելի վտանգների, կրել անասելի տառապանքներ: Գևորգ Բ Գառնեցին կազմակերպել է և գլխավորել միմյանց հաջորդած Աշոտ Ա և Սմբատ Ա Բագրատունիների թագադրության հանդեսները՝ ամրապնդելով նրանց իշխանության հոգևոր-իրավական հիմքերը: Դրանով իսկ նա սրբազնագործել է և օրինականացրել Բագրատունիների իշխանությունը՝ շեշտադրելով այն գաղափարը, որ թագավորության վերականգնումը ոչ թե օտար տիրակալների շնորհն է, այլ Հայաստանի գործուն ուժերի պայքարի արդյունքը:

**Вардан Алексанян – Геворг II Гарнеци – католикос, символизирующий восстановление Армянского царства**

*Ключевые слова – Армянская церковь, духовный учитель Маитоц, Ашот I Багратуни, Смбат I Багратуни, коронация, Армянское царство, посредническая миссия, пленение, слоение сил, Арабский халифат*

Конец IX века в истории Армении ознаменовался восстановлением царства, разрушенного четыре с половиной века назад. Восстановление царства во главе с Багратуни было результатом объединенной борьбы всех слоев армянского народа. Оно

---

<sup>1</sup> Ստեփաննոսի Մինեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Միսական, գլ. ԼԹ, էջ 163: Տաթևի վանքի կաթողիկե եկեղեցու՝ Պողոս-Պետրոսի նավակատիքին 906 թ. ներկա էր Հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցին:

<sup>2</sup> Ստեփանոս Տաթևեցի Ասողիկ, նշվ. աշխ., էջ 740): Ժամանակագիր Սամվել Անեցու մոտ պահպանվել է տեղեկություն այն մասին, որ Գևորգ Գառնեցի կաթողիկոսը նորոգել և պայծառացրել է Հավուց թառի վանքը, որը ծառայել է որպես նրա ամառային նստավայր (տե՛ս Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, էջ 167):

было реализовано при активной поддержке Армянской церкви, которая стремилась избавиться от религиозной нетерпимости и преследований иностранцев. В сотрудничестве с Ашотом I Багратуни, Геворг II Гарнеци в пределах своей духовной и политической компетенции улучшил отношения между армянскими князьями и посредством посреднической миссии создал атмосферу относительной солидарности в стране. Подтверждая высокое положение Армянской церкви в государстве, Патриарх Геворг активно участвовал в решении внешнеполитических и внутривнутриполитических вопросов страны. Ради безопасности страны и предотвращения кровопролития благородный духовный лидер неоднократно сталкивался с неминуемыми опасностями и испытывал невыразимые страдания. Геворг Гарнеци организовал и возглавил коронации чередовавшихся друг друга царей, Ашота I, Смбага I Багратуни, укрепил духовно-правовую основу их правления. Католикосской коронацией Армянский Патриарх освятил и легитимизировал власть Багратуни, тем самым подчеркивая мысль о том, что восстановление царства – это не дар иностранных правителей, а результат борьбы активных сил Армении.

### **Vardan Aleksanyan – *Gevorg II Garnetsi – Catholicos Symbolizing the Restoration of the Armenian Kingdom***

*Key Words – Armenian Church, Spiritual teacher Mashtots, Ashot I Bagratuni, Smbat I Bagratuni, coronation, Armenian kingdom, mediation mission, captivity, rallying forces, Arab Caliphate*

The end of the IX century in the history of Armenia was marked by the restoration of the kingdom, which was destroyed four and a half centuries ago. The restoration of the kingdom led by the Bagratuni was the result of the united struggle of all strata of the Armenian people. It was implemented with the active support of the Armenian Church, which sought to get rid of the religious intolerance and persecution of foreigners. In cooperation with Ashot I Bagratuni, Gevorg II Garnetsi, within the limits of his spiritual and political competence, improved relations between the Armenian princes and, through an intermediary mission, created an atmosphere of relative solidarity in the country. Confirming the high position of the Armenian Church in the state, Patriarch Gevorg actively participated in solving foreign and domestic political issues of the country. For the sake of the country's security and prevention of bloodshed, the noble spiritual leader repeatedly faced imminent dangers and endured untold sufferings. Gevorg Garnetsi organized and headed the coronation of alternating kings, Ashot I and Smbat I Bagratuni, strengthened the spiritual and legal basis of their rule. Enthroned as Catholicos, the Armenian Patriarch consecrated and legitimized Bagratuni's rule, thereby emphasizing the idea that the restoration of the kingdom is not a gift from foreign rulers, but the result of the struggle of the active forces of Armenia.

Ներկայացվել է 12.05.2021

Գրախոսվել է 17.05.2021

Ընդունվել է տպագրության 06.07.2021